

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 24/2

ք.Երևան

5 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.03.2018թ. N4100366 ակտի դեմ «ՍԼԱՏԻՆԻ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ՍԼԱՏԻՆԻ» ՍՊԸ-ն գրանցված է որպես հարկ վճարող և զբաղվում է խմորեղենի արտադրությամբ ու առևտրով:

Համաձայն ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 23.02.2018թ. թիվ 4100366 հանձնարարագրի՝ 12.03.2018թ. մինչև 12.03.2018թ. կատարվել է.

ա) աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ճշտության ստուգում,

բ) հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

26.05.2018թ. կազմվել է թիվ 4100366 ստուգման ակառ, համաձայն որի 1-ին կետի ք.Երևան, Գ.Նժդեհի 29 հասցեում գործող խանութում 12.03.2018թ. թվով երկու վարձու աշխատողներ Անթառամ Խաչատրյանը և Լիլիթ Թումանյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չեն եղել, իսկ 2-րդ կետի համաձայն՝ ք.Երևան, Բագրատունյաց 13 հասցեում գտնվող խանութում կատարվել է գնում, որի համար չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, ինչպես նաև նույն օրը ք.Երևան, Գ.Նժդեհի 29 հասցեում գտնվող խանութից կատարվել է գնում, որի համար ևս չի տրամադրվել ՀԴՄ կտրոն:

«ՍԼԱՏԻՆԻ» ՍՊԸ-ն համաձայն չէ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.03.2018թ. N4100366 ակտի հետ և խնդրում է այն անվավեր ճանաչել:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 23.02.2018թ. N4100366 հանձնարարագրի համաձայն «ՍԼԱՏԻՆԻ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու

դեպքերի բացահայտմանն ուղղված) ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.03.2018թ. N4100366 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որի 1-ին կետով առաջադրվել է ՀՀ հարկային 412-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 120.000 դրամ, իսկ 2-րդ կետով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.03.2018թ. N4100366 ակտը վերադատության կարգով բողոքարկվելուց բացի, Ակտի դեմ հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 10.04.2018թ. որոշման համաձայն (վարչական գործ թիվ ՎԴ/3909/05/18) «ՍԼԱՏԻՆԻ» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 26.03.2018թ. N4100366 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՍԼԱՏԻՆԻ» ՍՊԸ-ի դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՍԼԱՏԻՆԻ» ՍՊԸ դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ